Հաստատում եմ՝
հիմք մանկավարժական
խորհրդի 31.08.2022թ.
Տնօրեն՝ Ա. Սահակյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՎԱՐԴԵՆԻՍԻ N 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

# Տ Ա Ր Ե Կ Ա Ն Պ Լ Ա Ն

# ԲԱԺԻՆ 1

| N | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետ | Պատասխանատու | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Անցկացնել 5-6 տարեկան երեխաների հաշվառում դպրոցի սպասարկման տարածքում: | մարտ | տնօրեն, ՏՈՒԱԳՏ, դասվարներ,դաստիարակ | |
| 2 | Հնարավորության սահմաններում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ապահովել դասագրքերով և գրենական այլ պիտույքներով: | սեպտեմբեր | Տնօրեն, ՏՈՒԱԳՏ, ԴԱԿ | |
| 3 | Կատարել միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաների հաշվառում: | սեպտեմբեր | ՏՈՒԱԳՏ, ԴԱԿ | |
| 4 | Սահմանել վերահսկողություն պարբերաբար ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ, ժամանակին կանխել դրանք, անհրաժեշտության դեպքում առաջնորդվել օրենքով սահմանված կարգով: | տարվա ընթացքում | ՏՈՒԱԳՏ ԴԱԿ | |
| 5 | Ուշադրության կենտրոնում պահել ուսման մեջ ետ մնացող աշակերտներին | տարվա ընթացքում | տնօրեն, ՏՈՒԱԳՏ դասղեկներ | |
| 6 | Աշխատանք տանել 5 -12 -րդ դասարանների դժվար դաստիարակվող երեխաների և նրանց ծնողների հետ: | ուստարվա ընթացքում | ՏՈՒԱԳՏ, դասղեկներ Ուսուցչի օգնական | |
| 7 | Պարտադիր ուսուցման գործընթացի իրականացմանը մասնակից դարձնել ծնողներին, ծնողական խորհուրդներին: | ուստարվա ընթացքում | տնօրեն ԴԱԿ | |
| 8 | Աշխատանք տանել ուսման մեջ ցածր առաջադիմություն ունեցող,ԿԱՊԿՈՒ սովորողների հետ: | ուստարվա ընթացքում | ՏՈՒԱԳՏ, դասղեկներ, ԴԱԿ Ուսուցչի օգնական | |
| 9 | Նախակրթարանի և տարրական դասարանների աշակերտների „Կայուն դպրոցական սնունդ« ծրագրի մեկնարկ: Սանիտարահիգիենիկ նորմերի ապահովում խոհանոցում: | սեպտեմբեր ուստարվա ընթացքում | Տնօրեն Խոհարար | |

## ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՀԵՏ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

### ԲԱԺԻՆ 2

| N | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետ | Պատասխանատու | Ծանոթու թյուն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Գրադարանում ստեղծել մեթոդական բաժին, այն հարստացնել մեթոդական մասնագիտական գրականությամբ, ինչպես նաև առարկայական ծրագրերով և չափորոշիչներով: | օգոստոս - սեպտեմբեր | գրադարանավար | |
| 2<br>ա) | Տարեսկզբին հրավիրել առարկայական մասնախմբի նախագահների խորհրդակցություն, պլանավորել նրանց աշխատանքային տարեկան գործունեությունը՝ հանրակրթական հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման և առարկայի դասավանդման արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Հանձնարարել՝<br>Առարկայական մասնախմբերում քննարկել, ամբողջական տեսքի բերել ուստարվա առարկայական մասնախմբի աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման: | օգոստոս | տնօրեն, ՏՈՒԱԳՏ | |
| բ) | Ներկայացնել ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի տնօրինման վերաբերյալ առաջարկություններ, | օգոստոս | մ/մ նախագահներ | |
| գ) | Ստուգել ուսուցիչների առարկայական թեմատիկ պլանները, տալ համապատասխան հանձնարարություններ: Թեմատիկ պլաններում առարկայի չափորոշչային պահանջների համապատասխանության և լիարժեքության մասին ներկայացնել հաշվետվություն տնօրենությանը: | սեպտեմբեր 1-10 | ՏՈՒԱԳՏ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3 | Անցկացնել առարկայական մասնա-խմբերի ղեկավարների սեմինար խորհրդակցություն: Լսել մասնախմբերի նախագահների հաշվետվությունը կատարած աշխատանքների մասին, քննարկել, տալ համապատասխան հանձնարարություններ, անհրաժեշտության դեպքում աշխատանքային պլաններում կատարել փոփոխություններ: Քննարկել մեթոդամանկավարժական հրատապ հիմնահարցեր: | ամիսը մեկ անգամ | տնօրեն, ՏՈՒԱԳՏ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4 | Հաստատել դասղեկների տարեկան աշխատանքային պլանները,տեղադրել պաշարների շտեմարանում,հետևել դասղեկի ժամերի կատարմանը: | օգոստոս-սեպտեմբեր | ՏՈՒԱԳՏ | |
| 5 | Կատարել դասալսումներ՝ միջին հաշվով շաբաթական 6-9 ժամ /տնօրեն՝ 2-3, փոխտնօրեն՝ 2-3, առարկայական մասնախմբի նախագահ՝2-3/: Դասալսումները կատարել նպատակային և նույն օրը քննարկել ուսուցչի հետ՝ դասալսման տետրում գրելով անհրաժեշտ դիտողություն և հանձնարարություններ: | ուստարվա ընթացքում | տնօրեն, ՏՈՒԱԳՏ , մասնախմբերի նախագահներ | |
| 6 | Ուշադրության կենտրոնում պահել սկսնակ ուսուցիչներին: Նրանց համար կազմակերպել մեթոդամանկավարժական օգնություն: | ուստարվա ընթացքում | ՏՈՒԱԳՏ, մասնախմբեր նախագահներ | |
| 7 | Հետևել, որպեսզի դասը հագեցված լինի զանազան ուսումնադիտողական նյութերով, հնարավոր լաբորատոր սարքավորումներով՝ կարևորելով տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառումը: | ուստարվա ընթացքում | տնօրենություն | |
| 8 | Բարձր դասարաններում պարբերաբար կազմակերպել բանավեճեր, քննարկումներ, որոնք էլ ավելի կնպաստեն աշակերտների ինքնակրթության և հոգևոր մտքի զարգացմանը: | ուստարվա ընթացքում | ՏՈՒԱԳՏ, մասնախմբերի նախագահներ, ուսուցիչներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 9 | Ա)ՈՒսուցիչներին ոգևորել,քաջալերել,որպեսզի մասնակցեն կամավոր ատեստավորման գործընթացին<br><br>Բ) Կազմել պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների անվանացանկը | ուստարվա ընթացքում | | |
| 10 | Պահանջել որպեսզի յուրաքանչյուր ուսուցիչ ուսումնական տարվա ընթացքում հանդես գա առնվազն մեկ մեթոդական -մանկավարժական, առարկայական բնույթի զեկուցումով: Այն քննարկել առարկայական մասնախմբում: | ուստարվա ընթացքում | ՏՈՒԱԳՏ, մասնախմբեր նախագահներ | |
| 11 | Ուսումնասիրել հմուտ ուսուցիչների առաջավոր փորձը և տարածել դպրոցում: | մշտապես | տնօրեն, ՏՈՒԱԳՏ | |
| 12 | Կազմակերպել կոնսուլտացիոն պարապմունքներ աշակերտներին քննությունների նախապատրաստելու համար: | մայիս | տնօրեն ՏՈՒԱԳՏ, մ/մ նախագահներ | |
| 13 | Ժամանակին կազմել և հաստատել քննական հանձնաժողովները, փակցնել քննական կարգացուցակը` քննությունները սկսվելուց առնվազն 10 օր առաջ: | մայիս | տնօրեն, ՏՈՒԱԳՏ | |
| 14 | Ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին: | ուստարվա ընթացքում | տնօրենություն | |
| 15 | Ուսուցիչներին ժամանակին ծանոթացնել ՀՀ կառավարության որոշումներին, ՀՀ կրթության և գիտության նախարարության հրամաններին, հրահանգներին և այլ նորմատիվ փաստաթղթերին: | ուստարվա ընթացքում | տնօրեն | |
| 16 | Յուրաքանչյուր առարկայական մասնա-խմբից ուսումնասիրել 2-3 ուսուցչի աշխատանքային գործունեությունը, արդյունքները քննարկել տնօրինության նիստում կամ առարկայական մասնա-խմբում` տալով համապատասխան գնահատական: Հասնել այն բանին, որ մանկավարժական ողջ կոլեկտիվն իր գործունեությամբ բավարարի ուսուցիչներին ներկայացվող ընդհանրական պահանջները: | ուստարվա ընթացքում | ՏՈՒԱԳՏ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 17 | Էլ. դասամատյանների գործարկման համար տեղեկատվություն տրամադրել | սեպտեմբեր | Տնօրեն<br>ՏՈՒԱԳՏ<br>Օպերատոր | |
| 18 | Դասարանների նդպրոցի ծնողական խորհրդների ձևավորում, ընդհանուր ծնողական ժողովների անցկացում | սեպտեմբեր | Տնօրեն<br>ԴԱԿ | |
| 19 | Անհրաժեշտության դեպքում ծնողի համաձայնությամբ երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման իրականացում | Սեպտեմբեր-հոկտեմբեր | Տնօրեն<br>ՏՈՒԱԳՏ<br>Ուսուցչի օգնական | |

## ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
## ԲԱԺԻՆ 3

| N | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետ | Պատասխանատու | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Ուսուցիչներին ժամանակին ապահովել ուսումնական ծրագրերով և երաշխավորված մեթոդական ուղեցույցներով: | օգոստոս | ՏՈՒԱԳՏ, առարկայական մասնախմբեր | |
| 2 | Ուսումնական առարկաների դասավանդումը բարելավելու նպատակով ուսուցումը կազմակերպել հնարավորության դեպքում կաբինետային համակարգով, հարստացնել դպրոցի ուսումնանյութա-կան բազան, օգտագործել առկա տեխնիկական միջոցների ողջ հզորությունը: | ուստարվա ընթացքում | տնօրեն, տնտեսվար | |
| 3 | Աշխատանք տանել կաբինետները և դասարանները անհրաժեշտ նյութերով ու սարքավորումներով կահավորելու ուղղությամբ: | օգոստոս սեպտեմբեր | տնօրեն, տնտեսվար | |
| 4 | Աշխատանք տանել աշակերտների մասնագիտական կողմնորոշումը ճիշտ նպատակաուղղելու համար: | ուստարվա ընթացքում | ԴԱԿ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5 | Սովորողների կրթության որակը բարձրացնելու նպատակով կատարել նպատակային դասալսումներ, արդյունքները քննարկել, առաջարկություններն ու դիտողությունները գրանցել | ուստարվա ընթացքում | տնօրեն, ՏՈՒԱԳՏ | |
| 6 | Կատարել առարկայական ուսումնասիրություններ, արդյունքները քննարկել առարկայական մասնախմբերի նիստերում, տնօրենության խորհրդակցություններում, մանկավարժական խորհրդում Ուսումնասիրել՝<br>ա)Մայրենի լեզվի դրվածքը /1-12-րդ դասարաններում/<br>բ)ՏՀՏ - ի օգտագործումը դասերին<br><br>գ)նոր ծրագրերի և չափորոշչային պահանջների իրականացումը: | ուստարվա ընթացքում | տնօրեն, փոխտնօրեն | |
| 7 | Ուսումնասիրել լաբորատոր, գործնական աշխատանքների ծրագրային պահանջների կատարման ընթացքը բնագիտական առարկաներից: | դեկտեմբեր մայիս | ՏՈՒԱԳՏ, մասնախմբերի նախագահներ | |
| 8 | Կազմակերպել առարկայական շաբաթներ, միամսյակներ, Առարկայական միամսյակներին՝<br>ա) կազմակերպել ցերեկույթներ, բաց դասեր,<br>բ) լույս ընծայել պատի թերթեր | ուստարվա ընթացքում | ՏՈՒԱԳՏ մասնախմբերի նախագահներ, ուսուցիչներ, ԴԱԿ | |
| 9 | Անցկացնել դպրոցական օլիմպիադաներ: Առարկայական օլիմպիադաներին նախապատրաստվել ուստարվա սկզբից: | Նոյեմբեր-դեկտեմբեր | տնօրեն, hանձնաժողով, մասնախմբերի նախագահներ | |
| 10 | Աշխատանք տանել ուսումնադաստիարակչական գործընթացում աշակերտակենտրոն մոտեցման ապահովման և ուսուցման ավանդական և արդիական մեթոդների ներդաշնակ համադրման ուղղությամբ | հոկտեմբեր մարտ | ՏՈՒԱԳՏ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 11 | Հայտնաբերել օժտված երեխաներին, տալ առարկայական խոր և կայուն գիտելիքներ, մղել նրանց ստեղծագործական, որոնողական աշխատանքի: | ուստարվա ընթացքում | տնօրեն, ՏՈՒԱԳՏ, մասնախմբերի նախագահներ, ուսուցիչներ | |
| 12 | <u>ԴԱՍՂԵԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ</u><br>Օգնել դասղեկներին՝ կազմելու դաստիարակչական աշխատանքների աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման: | օգոստոս | ԴԱԿ | |
| ա) | Դասղեկներից պահանջել՝ աշխատանքային պլանի հիմքում ամրագրել հետևյալ դրույթները. Ստեղծել դասարանական ամուր կոլեկտիվ, աշակերտներին տալ հայեցի դաստիարակություն, նրանց մեջ արթնացնել ազգային արժանապատվություն և հպարտություն, դաստիարակության հիմքում դնել միջնակարգ հանրակրթական դպրոցի շրջանավարտի նկարագրի պահանջները: | ուստարվա ընթացքում | տնօրեն ՏՈՒԱԳՏ դասղեկներ դասվարներ ԴԱԿ | |
| բ) | Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ և այն ծառայեցնել երեխաների բազմակողմանի դաստիարակության և մանկական առողջ կոլեկտիվի ձևավորման նպատակին: | ուստարվա ընթացքում | ՏՈՒԱԳՏ դասղեկներ դասվարներ | |
| գ) | Հետևողական աշխատանքի միջոցով հնարավորինս նվազեցնել անհարգելի բացակայությունները: | ուստարվա ընթացքում | տնօրեն դասղեկներ ԴԱԿ | |
| դ) | Կիսամյակը 1-2 անգամ հրավիրել դասարանական ծնողական ժողով: Ամուր հիմքերի վրա դնել աշակերտ -դպրոց - ընտանիք կապը: Ծնողների համար կարդալ մանկավարժական թեմաներով զեկուցումներ: | ուստարվա ընթացքում | ՏՈՒԱԳՏ դասղեկներ դասվարներ | |
| ե) | Յուրաքանչյուր դասարանում ստեղծել ծնողխորհուրդ (բաղկացած 3-5 հոգուց) , ապահովել ծնողխորհրդի մասնակցությունը ուսումնական գործընթացի կազմակերպմանը: | սեպտեմբեր | ԴԱԿ, դասղեկներ, դասվարներ | |
| զ) | Սահմանել բաց դռների օր, ապահովել ծնող-ուսուցիչ կապը: | ուստարվա ընթացքում | տնօրեն, ՏՈՒԱԳՏ, դասղեկներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 13 ա) | ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հետևողական աշխատանք տանել աշակերտների գեղագիտական դաստիարակության գործի բարելավման ուղղությամբ: | ուստարվա ընթացքում | տնօրեն, ՏՈՒԱԳՏ դասղեկներ, ԴԱԿ | |
| բ) | Սովորողների օգնությամբ ձևավորել շենքի միջանցքներն ու կաբինետները, կազմակերպել բազմաբնույթ միջոցառումներ: | ուստարվա ընթացքում | տնօրեն, ՏՈՒԱԳՏ, ԴԱԿ | |
| գ) | Աճեցնել սենյակային ծաղիկներ դասասենյակներում ու միջանցքներում: Ստեղծել թեմատիկ վահանակներ: | սեպտեմբեր | ՏՈՒԱԳՏ դասվար, դասղեկներ, ԴԱԿ | |
| | | | | |
| 14 ա) | ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Սովորողների ֆիզիկական դաստիարակության բարելավման նպատակով մարզադահլիճը հնարավորության պայմաններում հարստացնել մարզական գույքով: | օգոստոս - սեպտեմբեր | տնօրեն, տնտեսվար, ՏՈՒԱԳՏ | |
| բ) | Անցկացնել առավոտյան լիցքային վարժություններ, առողջարարական դասամիջոցներ և մարմնամարզական րոպեներ: | ուստարվա ընթացքում | ՏՈՒԱԳՏ ուսուցիչներ | |
| դ) | Կազմակերպել սպորտլանդիաներ կրտսեր և միջին դպրոցում: | նոյեմբեր ապրիլ | ֆիզկուլտուրայի ուսուցիչ | |
| ե) | Պարբերաբար կազմակերպել աշակերտների կողմից մարզական նորմատիվների հանձնում: | սեպտեմբեր մայիս | տնօրեն, ֆիզկուլտուրայի ուսուցիչ | |
| զ) | Անցկացնել միջդասարանական, միջդպրոցական մրցումներ: Դրանք կազմակերպել բարձր մակարդակով, նախապես իրազեկ դարձնել դասղեկներին և աշակերտներին: | հոկտեմբեր մայիս | ՏՈՒԱԳՏ, ֆիզկուլտուրայի ուսուցիչներ, դասղեկներ | |
| է) | Խստորեն վերահսկել ֆիզկուլտուրայի դահլիճում անվտանգության և սանիտարական կանոնների պահպանումը: | մշտապես | տնօրեն, ուսուցիչներ | |
| ը) | Պարբերաբար հետևել ուսումնական գործընթացի հիգիենային, պահպանել դասացուցակների կազմման և տնային աշխատանքների ժամաբաշխման անհրաժեշտ պահանջները: | մշտապես | ՏՈՒԱԳՏ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| թ) | Համայնքի բուժքրոջ միջոցով անցկացնել զրույց բարձր դասարանների սովորողների օրվա ռեժիմի, անձնական հիգիենայի մասին: | ուստարվա ընթացքում | բուժքույր | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 15 ա) | <u>ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ</u><br>Կազմակերպել հանդիպումներ Հայրենական մեծ պատերազմի վետերանների, հայկական բանակի հրամանատարների, Արցախի ինքնապաշտպանական մարտերի մասնակիցների հետ: | սեպտեմբեր մայիս | զինղեկ, պատմության ուսուցիչներ ,ԴԱԿ զինղեկ | |
| բ) | Այցելություն Հայրենական մեծ պատերազմում, Արցախի անկախության, Հայաստանի սահմանների պաշտպանության համար զոհված մարտիկների հուշարձաններին: | սեպտեմբեր մայիս | ՏՈՒԱԳՏ, զինղեկ, դասղեկներ, ԴԱԿ | |
| գ) | Անցկացնել «Քաղաքացիական պաշտպանության օրը դպրոցում» միջոցառումը: | Հոկտեմբեր-ապրիլ | տնօրեն, զինղեկ | |
| 16 | Աշխատանքային դաստիարակություն<br>ա)Բարձրացնել աշխատանքային դաստիարակության, աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքների որակը: | ուստարվա ընթացքում | տնօրեն<br>ՏՈՒԱԳՏ<br>ուսուցիչներ | |
| | բ) Աշակերտների ուժերով կազմակերպել դպրոցում աճեցվող ծաղիկների խնամքը: Հոգ տանել, որպեսզի ծաղիկներով ու կանաչ բույսերով կահավորեն կաբինետները, միջանցքներն ու սրահները: | ուստարվա ընթացքում | ՏՈՒԱԳՏ<br>դասղեկներ<br>ԴԱԿ | |
| 17 | ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ<br>ա) Օգնել գրադարանավարին` կազմելու և հաստատման ներկայացնելու տարեկան աշխատանքային պլանը: | օգոստոս | տնօրեն<br>ՏՈՒԱԳՏ | |
| | բ) Դպրոցի հնարավորություններից ելնելով` հարստացնել գրադարանային ֆոնդը: Վերանորոգել գրադարանային ֆոնդի դասագրքերն ու գրքերը: | ուստարվա ընթացքում, մշտապես | տնօրեն, գրադարանավար | |
| | գ)Կազմակերպել միջոցառումներ նշանավոր և հիշարժան տարելիցների վերաբերյալ: | ուստարվա ընթացքում | գրադարանավար, ԴԱԿ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | դ) Ստեղծել «Պատանի ստեղծագործողի» ակումբ: Նպաստել երեխաների ստեղծագործական մտքի զարգացմանը: Ի հայտ բերել տաղանդավոր աշակերտներին: | ուստարվա ընթացքում | գրականության ուսուցիչներ, գրադարանավար | |
| | ե) Ստեղծել թեմատիկ քարտարաններ, ղեկավարել կրտսեր դպրոցի ընթերցանությունը: | ուստարվա ընթացքում | գրադարանավար | |
| | զ) Դասագրքերով ապահովել աշակերտներին, մշակել համապատասխան փաստաթղթեր: | սեպտեմբեր | տնօրեն, գրադարանավար | |

## ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ
## Բաժին 4

| N | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետ | Պատասխանատու | Ծանոթու թյուն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1<br><br>ա)<br><br>բ) | Յուրաքանչյուր շաբաթվա վերջում գումարել տնօրինության նիստ, վերլուծել շաբաթական պլանները:<br>Լսել տնօրինության անդամների հաղորդումը շաբաթական պլանների կատարողականի մասին: Բացահայտել աշխատանքում տեղ գտած թերությունները:<br>Քննարկել հաջորդ շաբաթվա աշխատանքային ծրագրերը: | ուստարվա ընթացքում | տնօրեն | |
| 2 | Ուսումնական տարվա սկզբից ունենալ ուսուցիչների բացակայությունների հաշվառման մատյան: | ուստարվա ընթացքում | ՏՈՒԱԳՏ | |
| 3 | Հետևել, որ դասաժամերի բացթողումները լրացվեն լրացուցիչ պարապմունքների միջոցով: | մշտապես | ՏՈՒԱԳՏ | |
| 4 | Ուսումնական տարվա սկզբից կատարել աշխատանքի բաժանում՝ որոշակի դարձնելով յուրաքանչյուրի աշխատանքի շրջանակները: | օգոստոսի վերջ | տնօրեն | |
| 5 | Ստուգել և հաստատել ծրագրային նյութերի թեմատիկ պլանավորումները: | սեպտեմբերի սկիզբ | տնօրեն, ՏՈՒԱԳՏ | |
| 6 | Յուրաքանչյուր ամսվա վերջին տնօրինության նիստում քննարկել սովորողների հաճախումների հարցը: | մշտապես | տնօրեն, ՏՈՒԱԳՏ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 7 | Ստուգել պարտադիր կրթության օրենքի սահմանադրական պահանջի կատարման վիճակը դպրոցում և արդյունքները քննարկել տնօրինության նիստում կամ մանկավարժական խորհրդում: | սեպտեմբեր | տնօրեն, ՏՈՒԱԳՏ | |
| 8 | ա) Սովորող-ների գիտելիքներին, կարողություններին ու հմտություններին ծանոթանալու նպատակով տարեկան անցկացնել ստուգողական գրավոր աշխատանքներ:<br>բ) Գրավոր աշխատանքների արդյունքները քննարկել առարկայակ մասնախմբերում և մանկավարժական խորհրդի նիստում: | նոյեմբեր<br>ապրիլ<br>նոյեմբեր<br>ապրիլ | տնօրեն, ՏՈՒԱԳՏ, մասնախմբի նախագահ<br>տնօրեն, ՏՈՒԱԳՏ, մասնախմբի նախագահ | |
| 9 | Ստուգել լաբորատոր և գործնական աշխատանքների կատարման վիճակը բնագիտական առարկաներից: | հոկտեմբեր<br>ապրիլ | ՏՈՒԱԳՏ, մասնախմբերի նախագահ | |
| 10 | Ստուգել տարբեր առարկաներից տրված | կիսամյակի | ՏՈՒԱԳՏ | |
| | գործնական և թեմատիկ աշխատանքների քանակը և որակը: Արդյունքները քննարկել մանկավարժական խորհրդի նիստում: | վերջում | մասնախմբի ղեկավարներ | |
| 11 | Ստուգել ուսումնական ծրագրերի կատարողականը և արդյունքները քննարկել տնօրինության ընդլայնված նիստերում: | դեկտեմբեր<br>ապրիլի<br>սկիզբ | տնօրեն, ՏՈՒԱԳՏ, մասնախմբի ղեկավարներ | |
| 12 | Ստուգել էլեկտրոնային դասամատյանների, աշակերտների օրագրերի ու տետրերի վարման վիճակը: | շաբաթը մեկ անգամ | ՏՈՒԱԳՏ, դասղեկներ | |
| 13 | Ստուգել դժվար առաջադիմող աշակերտների հետ տարվող աշխատանքները, քննարկել տնօրինության ընդլայնված նիստերում: | հոկտեմբեր<br>մարտ | ՏՈՒԱԳՏ<br>դասղեկներ,<br>ԴԱԿ | |
| 14 | Գիտելիքների ստուգում կազմակերպել տարրական դպրոցում /4-րդ դասարան- | դեկտեմբեր<br>ապրիլ | ՏՈՒԱԳՏ | |
| 15 | Ուսումնասիրել դասղեկների կատարած աշխատանքը: Արդյունքները քննարկել դասղեկների մեթոդմիավորումում, տնօրինության ընդլայնված նիստում: | ուստարվա ընթացքում | ՏՈՒԱԳՏ | |

## ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ
## ԲԱԺԻՆ 5

| N | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետ | Պատասխանատու | Ծանոթու թյուն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ: | սեպտեմբեր | ՏՈՒԱԳՏ դասղեկներ | |
| 2 | Նախապատրաստել ընդհանուր ծնողա-կան ժողով և քննարկել դպրոցի առջև ծառացած՝ համատեղ լուծման ենթակա հարցերը: | ուստարվա ընթացքում | տնօրեն, ծնողխորհրդի նախագահ, դասղեկներ | |
| 3 | Ծնողական համայնքի ֆինանսական աջակցությամբ հարստացնել դպրոցի արտաբյուջետային միջոցները: Խորհրդի որոշմամբ այդ միջոցները նպատակաուղղել դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավմանը, նորարարական և փորձարարական աշխատանքների կազմակերպմանը: | սեպտեմբեր, ուստարվա ընթացքում | տնօրեն, ծնողական խորհուրդ, դպրոցական խորհուրդ | |
| 4 | Կազմել ծնողների համար անցկացվող զրույցների և զեկուցումների թեմատիկ պլան: | սեպտեմբեր | տնօրեն, ՏՈՒԱԳՏ | |
| 5 | Պլանավորել ծնողական խորհրդի աշխատանքները: | սեպտեմբեր | տնօրեն, ծնողխորհուրդ | |
| 6 | Ապահովել դպրոցի և ծնողների համատեղ գործունեությունը՝ սովորողների ուսուցման ու դաստիարակության բարելավման գործում: | ուտարվա ընթացքում | տնօրեն | |
| 7 | Ծնողներին մասնակից դարձնել սովորողների արտադպրոցական, դաստիարակչական աշխատանքներին: | մշտապես | ՏՈՒԱԳՏ, ԴԱԿ | |

## ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ
## ԲԱԺԻՆ 6

| N | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետ | Պատասխանատու | Ծանոթու թյուն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Կազմել տարիֆիկացիա: | սեպտեմբեր | տնօրեն | |
| 2 | Կազմել ծախսերի նախահաշիվ, քննար-կել դպրոցի խորհրդում և ներկայացնել մարզպետարանի ֆինանսական բաժին: | ուստարվա ընթացքում | հաշվապահ, դպրոցական խորհուրդ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3 | Արտաբյուջետային ծախսերի նախահաշիվը համաձայնեցնել դպրոցի կառավարման խորհրդի հետ: | ուստարվա ընթացքում | տնօրեն | |
| 4 | Կատարել դպրոցի հաշվեկշռում եղած գույքի ու սարքավորումների հաշվառում: ժամանակին դիմել մարզպետարանին և տեղական ինքնակառավարման մարմին-ներին` շենքի վերանորոգման, գույքի ձեռք բերման նպատակով համապատասխան ֆինանսավորում ստանալու համար: | նոյեմբեր | տնօրեն ՏՈՒԱԳՏ Տնտեսվար | |
| 5 | Աշխատանք տանել դպրոցական գույքի, սարքավորումների, ուսումնական տեխնիկական միջոցների, դիդակտիկ պարագաների և այլ նյութերի օգտագործման և պահպանման ուղղությամբ: | ուստարվա ընթացքում | տնտեսվար | |
| 6 | Ապահովել շենքի ջերմային, լուսային և օդային ռեժիմը: Կանոնավոր վիճակում պահել հակահրդեհային միջոցները: | ուստարվա ընթացքում | տնտեսվար | |
| 7 | Բարեկարգ վիճակում պահել դպրոցի շենքի բակը, մարզահրապարակը: Հետևել անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանմանը: | ուստարվա ընթացքում | տնտսվար | |
| 8 | Աշխատանք տանել կաբինետների և լաբորատորիաների կահավորման, հարստացման, եղած գույքն ու սարքավորումներն արդյունավետ օգտագործելու ուղղությամբ: | մշտապես | տնտեսվար, լաբորատ | |
| 9 | Մարզային համապատասխան բանկային բաժանմունք ներկայացնել բանկային | սահմանված ժամկետում | տնօրեն, հաշվապահ | |
| 10 | գործառությունների իրականացման համար վճարային փաստաթղթերն ստորագրելու իրավունք ունեցող անձանց ստորագրությունների նմուշները: | | | |
| 11 | Հսկողություն սահմանել սովորողների սննդի կազմակերպման նկատմամբ: | ուստարվա ընթացքում | տնօրեն, ծնողխորհուրդ | |
| 12 | Հետևել դպրոցի ջեռուցման ներքին ցանցի անխափան աշխատանքին: | ուստարվա ընթացքում | տնօրեն, տնտեսվար,հնոցապահ | |

## ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ - ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

## ԲԱԺԻՆ 7

| N | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետ | Պատասխանատու | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Ելնելով շենքային պայմաններից՝ ուսումնական պարապմունքները կազմակերպել մեկ հերթով. | ուստարվա ընթացքում | տնօրեն | |
| 2 | ա) Կոմպլեկտավորել հետևյալ դասարանները՝<br>կրտսեր դպրոցի դասարաններ<br>բ) հիմնական դպրոցի դասարաններ<br>գ) ավագ դպրոցի դասարաններ | ուստարվա ընթացքում | տնօրեն | |
| 3 | Նշանակել դասղեկներ և դասվարներ: | օգոստոս | տնօրեն | |
| 4 | Նշանակել և մանկավարժական խորհրդին ներկայացնել առարկայական մասնախմբերի նախագահներին: | 20.08 -30.08 | տնօրեն, մանկավարժական խորհուրդ | |
| 5 | Նշանակել և հրամանագրել դասղեկներին, արտադասարանական վճարովի խմբակների ղեկավարներին: | օգոստոս | տնօրեն | |
| 6 | Ստեղծել աշխատանքային բարենպաստ պայմաններ՝ վերը նշված կառույցներում աշխատանքները նորմալ կազմակերպելու համար: | մշտապես | տնօրեն | |
| 7 | Ուսումնական մասնաշենքի յուրաքանչյուր հարկում, բակում, ծևավորված սրահներում կազմակերպել ամենօրյա հերթապահություն: | մշտապես | տնօրեն, ՏՈՒԱԳՏ | |
| 8 | Նշանակել ավագ հերթապահներ, պահանջել հերթապահներից՝<br>• Յսկել և իրականացնել օրվա հերթապահությունը ուսումնական մասնաշենքերում:<br>• Կազմակերպել տվյալ օրվա ուսումնական ողջ գործընթացը:<br>• Օրվա վերջում աշխատանքային գործընթացի մասին զեկուցել տնօրենին: | մշտապես | ՏՈՒԱԳՏ<br>ԴԱԿ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 9 | Սահմանել կարգ՝ Յուրաքանչյուր աշխատող աշխատանքի ներկայանալ դասերն սկսվելուց 15 րոպե առաջ՝ ըստ «Աշխատանքի ժամանակա-ցույցի»՝ հիմք ընդունելով «Ներքին կար-գապահական կանոնները»: Ուսուցիչների հաճախումների հաշվառման պարտականությունները դնել ՏՈՒԱԳՏ վրա: | մշտապես | տնօրեն, ՏՈՒԱԳՏ | |
| 10 | Սահմանել վարչասպասարկող անձնակազմի աշխատանքային ռեժիմը: Արտահայտել «Աշխատանքային ժամանակացույցում»: | ուստարվա ընթացքում | տնօրեն | |
| 11 | Հետևել, որպեսզի դպրոցի աշխատակազմը և աշակերտները պատասխանատվու-թյուն կրեն գույքի և անվտանգության կանոնների պահպանման համար: | ուստարվա ընթացքում | տնօրեն | |
| 12 | Դպրոցական շենքի պահպանման, տնտեսական կարիքները հոգալու, հակահրդեհային միջոցառումները իրականացնելու պատասխանատվությունը դնել տնտեսվարի վրա: | մշտապես | տնտեսվար | |
| 13 | Դպրոցական շենքը էլեկտրական հոսանքով ապահովելու, էլեկտրական գծերն ու սարքավորումները անվտանգ պահելու պատասխանատվությունը դնել դպրոցի տնտեսվարի վրա: | մշտապես | տնտեսվար | |
| 14 | Դասասենյակները, կաբինետները, ուսումնական գույքը և սարքավորումները նախապատրասել նոր ուստարվան: | օգոստոս | տնօրինություն | |
| 15 | Ստուգել դասագրքերի վիճակը | հունիս օգոստոս | դասղեկներ, գրադարանավար | |
| 16 | Զևավորել էլ. դասամատյանները: | օգոստոս - սեպտեմբեր | ՏՈՒԱԳՏ | |
| 17 | Անցկացնել տնօրենին կից խորհրդակցություններ յուրաքանչյուր շաբաթ: | շաբաթը մեկ անգամ | տնօրեն | |
| 18 | Կազմակերպել աշակերտների ինքնակառավարման աշխատանքները՝ ըստ դպրոցի աշակերտական կանոնադրության | սեպտեմբեր | ՏՈՒԱԳՏ, ԴԱԿ | |
| 19 | Համալրել ուսուցչական կազմը և կատարել դասաբաշխում: | օգոստոս | տնօրեն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 20 | Հաշվառել գրադարանային ֆոնդի օգտագործման պիտանի դասագրքերը: | հունիս | գրադարանավար | |
| 21 | Օգտագործման ենթակա ավել դասագրքերը տրամադրել այլ դպրոցների ,ձևավորել ակտեր: | օգոստոս սեպտեմբեր | գրադարանավար | |
| 22 | Դասղեկների հետ վերջնականապես ճշտել սոցիալապես անապահով, որբ և | սեպտեմբեր | ՏՈՒԱԳՏ, դասղեկ, ծնողխորհրդի | |
| | միակողմանի ծնողազուրկ երեխաների ցուցակը և հնարավորության սահմաններում ապահովել անվճար դասագրքերով: | | նախագահ | |
| 23 | Կազմակերպել խորհրդատվական պարապմունքներ ամառային առաջադրանքներ ստացած աշակերտների հետ, ժամանակին և կազմակերպված ընդունել ամառային առաջադրանքները: | 10.08 -30.08 | ՏՈՒԱԳՏ | |
| 24 | Դպրոցական շենքը նախապատրաստել նոր ուսումնական տարվան | 25.08 -30.08 | տնօրեն, տնտեսվար | |